Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի -ի
N -Ա որոշման

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹՎԵՐԸ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2027 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ

Նաիրի համայնք

2024 թվական

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ: 4

Ներածություն 5

Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական 7

Աշխարհագրական սահմաններ 9

ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ, ԱՂԲԱՆՈՑՆԵՐ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐԵՐ 10

Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները և քանակը 10

Թափոնների գործածություն 11

Աղբահանություն իրականացնող օպերատորներ 12

Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում 14

Թափոնների գործածության կայանքներ 14

Կանխատեսումների պլանավորման ժամանակաշրջան 20

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 24

Կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր 25

Մշտադիտարկում և վերլուծություն 31

ՆԱԽԱԲԱՆ

Կոտայքի մարզի Նաիրի խոշորացված համայնքն իր աշխարհագրական դիրքով, մարդկային և տնտեսական ռեսուրսներով, արդեն իսկ իրականացրած մի շարք ծրագրերով, ձևավորել է ապագայի իր տեսլականը. ունենալ զարգացած, մաքուր, հարմարավետ, համախմբված և ներկայանալի համայնք: Համայնքը ապրող մարմին է, որին անհրաժեշտ է ամենօրյա խնամք, ուշադրություն, աշխատանք: Այս համատեքստում համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման ռազվարական պլանը միտված է նպաստելու համայնքի տեսլականին:

Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանը (ԱՍՌՊ) համայնքի մաքրության և բնության պահպանման, բնակչության հարմարավետության և առողջ ապրելակերպ վարելուն ուղղված փաստաթուղթ է: ԱՍՌՊ-ն հանդիսանալու է Նաիրի համայնքում աղբահանության ոլորտի զարգացման հիմք հանդիսացող հիմնական փաստաթղթերից մեկը, որով կառաջնորդվենք առաջիկա չորս տարիների ընթացքում՝ համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներ իրականացնելիս:

ԱՍՌՊ-ի մշակելիս ուշադրություն է դարձվել համայնքի տարածքում անցակցված հարցումները, աղբահանության և սանմաքրման վերաբերյալ կարիքի գնահատումը, նրա համապատասխանեցմանը օրենքին և մեթոդական ուղեցույցին:

Պլանի կազմման ընթացքում հիմնվել ենք համայնքի տարածքում աղբահանության և սանմաքրման առկա իրավիճակի, համայնքի աղբահանությանն առնչվող հիմնախնդիրների, աղբահանության ոլորտն ավելի լայն հնարավորություններով զինելու, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունների և տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ օգտագործելով աղբի թափոնների վերամշակման կամ վերաօգտագործման և այլնի) հնարավորությունների, համագործակցային և արդյունավետ կառավարում իրականացնելու վրա:

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ:

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹՎԵՐԸ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2027 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ

Պլանի անվանումը	ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. պլան Նախատեսվող վերանայման ամսաթվերը՝ 2025 թվականի Սեպտեմբեր, 2027 թվականի Սեպտեմբեր
Պլանի մեջ ընդգրկված համայնք, բնակավայրեր	Նաիրի խոշորացված համայնք՝ Եղվարդ քաղաք, Զովունի, Պռոշյան, Քասախ, Զորավան, Սարալանջ, Բուժական, Արագյուղ բնակավայրեր
Պլանավորման ժամանակաշրջան	2024-2028թթ.
Ներկայացվող պլանի նախատեսված վերանայման ամսաթվերը	2025 թվականի սպետեմբեր 2027 թվականի սեպտեմբեր
Պլանը կազմող անձանց անուն, ազգանուն, պաշտոն	Հայկ Սարգսյան- Զարգացման ծրագրերի և զբոսաշրջության բաժնի պետ Վարազդատ Վարդանյան- Նաիրիի բարեկարգում և բնակֆոնդ ՀՈԱԿ-ի տնօրեն Անահիտ Վարդանյան- Սանիտարական մաքրման պատասխանատու
Պլանը կազմող անձանց էլ. հասցե և հեռախոսահամար	Հայկ Սարգսյան- +374 98772129, tvt-dechc@mail.ru Անահիտ Վարդանյան- +374 77243831, anahit_vardanyan_64@mail.ru
Պլանի էլեկտրոնային տարբերակը ներբեռնելու էլեկտրոնային հասցեն	**https://www.yeghvard.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=7c9206eb-e904-4e1f-8aa9-5eb559c1c55b**

Ներածություն

Նաիրի համայնքը ձևավորվել է <<Վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օերնքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> 24.09.2021 թվականի ՀՕ 328-Ն օրենքի ընդունման և 05.12.2021 թվականին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում: Համայնքը ներառում է Եղվարդ քաղաքը, Զովունի, Զորավան, Քասախ, Պռոշյան, Բուժական, Արագյուղ, Սարալանջ գյուղերը:Համայնքի կենտրոնը Եղվարդ քաղաքն է:

Նաիրի համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, մարզի հարավ-արևմտյան հատվածում: Համայնքը արևելքից սահմանակից է Նոր Գեղի և Նոր Հաճըն բնակավայրերին, արևմուտքից՝ Նոր Երզնկա բնակավայրին, հարավից՝ Երևանին, հյուսիսից՝ Ապարան համայնքին: Հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան քաղաքից 39 կմ է: Մինչբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Նաիրի համայնքի բոլոր բնակավայրերը:

Ռազմավարական պլանը միտված է Նաիրի խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման որակի բարելավմանը, կոշտ թափոնների կառավարման համակարգի ձևավորմանն ու խոշորացված համայնքի ներսում միջբնակավայրերի համագործակցության խթանմանը: ԱՍՌՊ-ը հնարավորություն կստեղծի նաև հասարակության ցածր իրազեկվածության մակարդակի բարձրացմանը՝ աղբի տեսակավորման, կենցաղային թափոնների կառավարման, աղբի վերամշակման գործընթացների և ռեսուրսների կառավարման պրակտիկայի վերաբերյալ ցածր տեղեկացվածության վերաբերյալ:

Ընդհանուր առմամբ համայնքում դեռևս ձևավորված չէ աղբի նախնական տեսակավորումը, այսինքն՝ տեսակավորումը սկզբնաղբյուրում: Հիմնականում այն կատարվում է ոչ ֆորմալ ուղիներով աղբավայրերում և աղբանոցներում:

Ներկայումս իրականացման փուլում է գտնվում «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր: Կառուցմանը զուգահեռ երկու մարզերում կներդրվի աղբահանության ինտեգրված արդյունավետ համակարգ, ինչն էլ կնպաստի Նաիրի խոշորացված համայնքում առավել արդյունավետ, հստակ պարբերականությամբ և պատշաճ կերպով գոյացող աղբահանության և սանիտարական

մաքրման աշխատանքների կառավարմանը: Խոշորացված համայնքի բոլոր բնակավայրերում կիրականացվեն աղբահանության որակյալ ծառայություններ՝ ինչով կբարելավվի ծառայությունների մատուցման որակը, կխթանվեն համագործակցության ավելի բարենպաստ պայմանները բնակավայրերի միջև:

ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանը կազմվել է մեթոդաբանության ուսումնասիրության, Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 4.4-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի, «Թափոնների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Բազմաբնակարան շենքերի մասին» ՀՀ օրենքների և մի շարք ենթաօրենսդրական ակտերի հիման վրա:

Ռազմավարական պլանը համապատասխանում է թափոնների հիերարխիային 65 %-ով՝ նպաստելով թափոնների կառավարման արդյունավետ համակարգի ներդրմանը: Հիերարխիային նպատակն է ապրանքներից առավելագույն օգուտների ստացումը և դրանցից նվազագույն թափոնների գոյացումը: Թափոնների կառավարման արդյունավետ համակարգերն ընդունակ են թափոնների նվազեցումից բացի զգալի այլ օգուտներ բերել, որոնք կարող են նաև ծառայել որպես հիմնական նպատակներ: Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման պլանում այդպիսի կողմնակի օգուտների շարքում կարելի է նշել.

*Հանրային առողջություն.*չկառավարվող աղբը հաճախ հայտնվում է փողոցներում կամ հորերում՝ գրավելով կենդանիներին և միջատներին: Փոսերի մեջ կամ ոչ համապատասխան աղբավայրերում թափված աղբը կարող է հանգեցնել թունավոր/տոքսիկ նյութերով ստորերկրյա ջրերի աղտոտման: Աղբի հավաքման և հեռացման գործընթացների բարելավման արդյունքում հնարավոր է ուղղակիորեն ազդել հանրային առողջության, մաքուր ջրի հասանելիության և ավելի մաքուր շրջակա միջավայր ունենալու հիմնախնդիրների վրա:

*Օդի որակ.*աղբի բացօթյա այրման սովորույթը շարունակաբար կիրառվում է աշխարհի տարբեր տարածաշրջաններում՝ որպես սև ածխափոշու առաջացման խոշոր աղբյուր: Թափոնների հավաքագրման երթուղիների վատ կազմակերպման, ինչպես նաև հնացած տրանսպորտային միջոցների կիրառման արդյունքում մեծանում է տրանսպորտային միջոցների կողմից կատարվող արտանետումների ծավալը, ինչը բացասաբար է անդրադառնում օդի որակի վրա:

*Աղքատության կրճատում.*բազմաթիվ տարածաշրջաններում թափոնները բնակչության եկամուտների կարևոր բաղադրիչ են և տնտեսության տարբեր ճյուղերի համար ծառայում են

որպես հումք: Տեղական իշխանությունների գործողությունները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ տնտեսական, ինչպես նաև աղբի վերամշակմամբ զբաղվող ճյուղերում կյանքի որակի և պայմանների վրա:

*Սոցիալական արդարություն.*կոշտ թափոնների վերամշակման գործընթացը շատ տեսանելի է ազդում մարդկանց կողմից իշխանությունների և հասարակության ընկալման վրա:

Հիմնախնդիրներ, առաջնահերթություններ, տեսլական

Նաիրի խոշորացված համայնքի ԱՍՌՊ-ի կազմման հիմնախնդիրներն են հանդիսացել՝

- խոշորացված համայնքի տարածքում աղբահանության պատշաճ համակարգի բացակայությունը,
- աղբահանության ծառայությունների մատուցման ընթացքում վերահսկողության և մշտադիտարկման համակարգի թույլ մեխանիզմների կիրառումը,
- շահագործվող տեխնիկայի ֆիզիկական մաշվածությունը, քաղաքաշինական, բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան աղբավայրերի բացակայությունը,
- համայնքային միջոցների սղությունը և մասնավոր հատվածի կողմից ոլորտում ներդրումներ կատարելու հետաքրքրվածության բացակայությունը,
- սկզբնաղբյուրում աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը՝ դրանց օգտահանման, վերաօգտագործման, վերամշակման և վերականգնման համար խթանիչ մեխանիզմների բացակայությունը
- Հանրության իրազեկվածության ցածր մակարդակը:

Որի արդյունքում ձևավորվել է ԱՍՌՊ-ի նպատակն ու ենթանպատակները՝

Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարության ընդունման նպատակն է՝ Նաիրի խոշորացված համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքման, ինչպես նաև աղբի քանակի նվազեցման, տեղափոխման և անվտանգ հեռացման, օգտահանման ու վերամշակման կայուն մեխանիզմների ներդրումը՝ նպատակաուղղված բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ:

Ենթանպատակ 1

Հանրային իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում՝ թափոնների ճիշտ կառավարման և բնակչության մշտական և հետևողական մասնակցությունը աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման գործընթացներում ապահովելու նպատակով:

Ենթանպատակ 2

Համայնքի հնարավորությունների առավելագույն չափով աջակցություն «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» իրականացման նպատակով:

Ենթանպատակ 3

Համայնքի աղբահանության կառավարման համակարգի և սանիտարական մաքրում իրականացնող ենթակառուցվածքների պրակտիկ գործունեության բարելավում՝ խոշորացված համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու նպատակով:

Ենթանպատակ 4

Ունենալ համայնքային բարելավված ենթակառուցվածքներ՝ խթանելով առավել արդյունավետ միջհամայնքային համագործակությունն ու բնակիչների ակտիվ մասնակցությունը:

Ենթանպատակ 5

Աղբահանության նոր սխեմաների ներդնում խոշորացված համայնքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները համակարգված իրականացնելու նպատակով:

Համակարգելով համայնքի աղբահանությանն և սանիտարական մաքրմանն ուղղված հիմնախնդիրներն ու նպատակները, ձևակերպվել է համայնքի տեսլականը աղբահանության վերաբերյալ.

Ունենալ զարգացած, մաքուր և բարեկեցիկ՝ հարմարավետ համայնք, իրականացնելով տեխնիկապես հագեցվածությամբ և նորարական լուծումներով աղբահանություն և սանիտարական մաքրում, ունենալ համայնքային բարելավված ենթակառուցվածքներ՝ խթանելով առավել արդյունավետ միջհամայնքային համագործակությունն ու բնակիչների ակտիվ մասնակցությունը աղբահանության ոլորտի զարգացման նպատակով:

Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական դրույթների կիրառումը կնպաստի համայնքի աղբահանության կայուն և համակարգված համակարգի ներդրմանը. որի արդյունքում կունենանք՝ համապատասխան հագեցվածությամբ սանիտարահիգիենիկ, բնապահպանական և քաղաքաշինական նորմերին համապատասխան աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ, միևնույն

ժամանակ, որպես երկրորդային ռեսուրս կնպաստի թափոնների առավելագույնս օգտագործմանը:

Աղյուսակ 1

Պլանավորման տարածքի նկարագրություն

	Ընդհանուր տարածք	Քաղաքային	Գյուղական	Արդյունաբերական	Գյուղատնտեսական	Կանաչ անտառային
Տարածքը (հա)	*1777,24*	*492,37*	*1284,87*	*425,88*	*18996,14*	*18,72*
Տարածքը տոլոսով ընդհանուրից (%)						

Աղյուսակ 2

Աղյուսակ 2-ում ներկայացված է խոշորացված համայնքի ժողովրդագրական տեղեկատվությունը՝

Գրանցված բնակչություն (մարդ)	Փաստացի բնակվող (մարդ)	Տնտեսությունների թիվը	Բազմաբնակարան շենքերի թիվը	Բնակարանների թիվը
44226	*38816*	*4834*	94	*3193*

Աշխարհագրական սահմաններ

Նաիրի խոշորացված համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում, մարզի հարավ-արևմտյան հատվածում: Համայնքը արևելքից սահմանակից է Նոր Գեղի և Նոր Հաճըն բնակավայրերին, արևմուտքից՝ Նոր Երզնկա բնակավայրին, հարավից՝ Երևանին, հյուսիսից՝ Ապարան համայնքին: Հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան քաղաքից 39 կմ է: Մինչբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Նաիրի համայնքի բոլոր բնակավայրերը:



Քարտեզի վրա կարմիր գծով եզրավորված են Նաիրի խոշորացված համայնքի ութ բնակավայրերը՝ Եղվարդ, Զովունի, Պռոշյան, Քասախ, Բուժական, Արագյուղ, Սարալանջ, Զորավան որտեղ իրականացվում են աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները:

ԱՂԲԻ ՏԵՍԱԿԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱՆԵՐ, ԱՂԲԱՆՈՑՆԵՐ ԵՎ ԱՂԲԱՎԱՅՐԵՐ

Կոշտ թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները և քանակը

աղյուսակ 4

Թափոն գոյացնող հիմնական աղբյուրների տեսակները	*Քանակը*	*Նշումներ*
Բնակելի նպատակային նշանակության շինություններ		

Բազմաբնակարան բնակելի շենքեր	94	
Անհատական բնակելի տներ	4834	
Ոչ բնակելի նպատակային նշանակության շինություններ		
Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շինություններ	355	
Հյուրանոցային և հյուրատնային տնտեսություններ, սպորտի համար նախատեսված, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների շինություններ	32	
Արտադրական, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շինություններ	67	
Գիտակրթական, մշակութային և գրասենյակային նշանակության շինություններ	29	
Շինություններ, որտեղ իրականացվում է մեկից ավելի, առանձնացված տնտեսական գործունեության	-	

Թափոնների գործածություն

աղյուսակ 5

Թափոնի տեսակը	%	Թափոնի տեսակը՝ մանրակրկիտ բաղադրության ուսումնասիրության դեպքում	%
Օրգանական	50	Խոհանոցային	30
		Այգիներից, պուրակներից և այլ կանաչ տարածքներից	20
Թուղթ և ստվարաթուղթ			
Պլաստիկ	30	Պլաստիկ շշեր	15
		Պոլիէթիլենային փաթեթավորումներ	5
		Պլաստիկ տարաներ	10

Ապակի	5		
Մետաղ	10		
Այլ թափոն	5	էլեկտրական	
		փայտ	
		վտանգավոր	5
		տեքստիլ	
		այլ	

Աղբահանություն իրականացնող օպերատորներ

Օպերատորի անվանում	Սպասարկվող համայնքներ/բնակավայրեր	Սպասարկվող տարածքի բնակչության թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների թիվը	Օպերատորի աղբատար մեքենաների տեսակը, տարողությունը	Հավաքվող թափոնների տեսակները/ խառը, տեսակավորված պլաստիկ թուղթ, շինարարական և այլն հավաքում	Օպերատորի աշխատանքի գնահատականը (1-ից 5)	Նշումներ
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Եղվարդ	40226	2	КАМАЗ	խառը	4	
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Բուժական		2	КАМАЗ	խառը	4	
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Սարալանջ		2	КАМАЗ	խառը	4	
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Արագյուղ		2	КАМАЗ	խառը	4	
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Զորավան		2	КАМАЗ	խառը	4	

«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Զովունի		2	КАМАЗ	խառը	4	
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Պոռշյան		2	ЗИЛ	խառը	4	
«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	Քասախ		2	ЗИЛ	խառը	4	

Թափոնների ոչ ֆորմալ տեսակավորում և օգտահանում

աղյուսակ 13

Տեսակավորման թափոնի տեսակ	Հավաքվում է ընդունման կետում (այո/ոչ)	Հավաքվում է աղբամաններից (այո/ոչ)	Հավաքվում է սպասարկման օբյեկտներից (այո/ոչ)	Հավաքվում է աղբավայրերում(այո/ոչ)
Ապակի	ոչ	ոչ	ոչ	ոչ
Պլաստիկ	ոչ	ոչ	ոչ	ոչ
Մետաղ	ոչ	ոչ	ոչ	ոչ
Թուղթ	ոչ	ոչ	ոչ	ոչ
Ավտոմեքենաների մարտկոց	ոչ	ոչ	ոչ	ոչ
Այլ թափոններ/նշել/	ոչ	ոչ	ոչ	ոչ

Թափոնների գործածության կայանքներ

աղյուսակ 14

Թափոնների գործածության կայանքներ	Առկայություն պլանավորման տարածքում առկա է/առկա չէ,	Հզորություն	Հեռավորություն պլանավորման տարածքից, կմ	Նշումներ

	առկա է այլ տարածքում			
Տեսակավորման կենտրոն	առկա չէ			
Ապակու վերամշակման կայանք	առկա չէ			
Մետաղի վերամշակման կայանք	առկա չէ			
Պլաստիկի վերամշակման կայանք	առկա չէ			
Թղթի վերամշակման կայանք	առկա չէ			
Կոմպոստացման կայանք	առկա չէ			
Կենսագազի արտադրման կայանք	առկա չէ			
Աղբակիզման կայանք	առկա չէ			
Վնասազերծման/վերացման կայանք	առկա չէ			

աղյուսակ 15

Աղբավայր /գտնվելու վայր/	Շահագործող համայնք /բնակավայրեր/	աղբավայրերի մակերեսը, հա	տեղադրվող աղբի տեսակ	ստեղծման իրավական հիմք /որոշման համար, ամսաթիվ/	սեփականության/օգտագործման իրավունք	Շահագործողի անվանում	Աղբի տեղադրման վճար/ՀՀ դրամ տոննան	Դեպի աղբավայր տանող մուտքի ճանապարհահատվածի վիճակը
Եղվարդ	Եղվարդ	3.1	կոշտ կենցաղային աղբ	1975 թվականի գործկոմի որոշում		«ԿՄՆՀ-ՆԲԲՖՀՈԱԿ»	780	լավ
Զովունի	Զովունի	3.1	կոշտ կենցաղային աղբ				780	լավ
Պռոշյան	Պռոշյան	1.0	կոշտ կենցաղային աղբ				780	լավ
Քասախ	Քասախ	1.0	կոշտ կենցաղային աղբ				780	լավ
Զորավան	Զորավան	3.1	կոշտ կենցաղային աղբ				780	լավ

Արագյուղ	Արագյուղ	**3.1**	կոշտ կենցաղայ ին աղբ				**780**	**լավ**
Սարալա նջ	Սարալանջ	**3.1**	կոշտ կենցաղայ ին աղբ				**780**	**լավ**
Բուժակա ն	Բուժական	**3.1**	կոշտ կենցաղայ ին աղբ				**780**	**լավ**

Թափոնի տեսակ	Աղբի գոյացում 1 շնչի հաշվով, կգ/տարի/մարդ	Աղբի տարեկան գոյացում, տոննա/տարի	Թափոնների գործածության ձևեր							
			I	**II**	**III**	**IV**	**V**	**VI**	**VII**	**Նշումներ**
			Խառը հավաքում (% ընդհանուր քանակից)	Տեսակավորված հավաքում (% ընդհանուր քանակից)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (% ընդհանուր քանակից)	Վերամշակում և/կամ օգտահանում (% ընդհանուր քանակից)	Վտանգավոր թափոնների չեզոքացում/վնասազերծում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում ոչ սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	Տեղադրում սանիտար. աղբավայրում (% ընդհանուր քանակից)	
Կոշտ կենցաղային թափոն	60	2400	80%	15	4600	5	0	80	0	-
Խոշոր եզրաչափերի թափոն	-	-	0	0	0	0	0	0	0	-
Շինարարական աղբ	1,3	51,7	80	30	10			40%		
Շահագործումից դուրս եկած ավտոմեքենաներ, մետաղական ջարդոն	-			20						
Անվադողեր		9,8		100%	70%			80%		

Փաթեթավորում և փափեթվածք										
Էլեկտրական և էլեկտրոնային թափոն										
Կենսաբանական թափոն										
Վտանգավոր թափոն		3,6		80%	70%			10%		

Կանխատեսումների պլանավորման ժամանակաշրջան

Հիմք ընդունելով խոշորացված համայնքի իրավիճակի վերլուծությունը, բացահայտված հիմնախնդիրները, առաջնահերթություններն ու տեսլականը, կարող ենք ենթադրել, 2024-2028թթ-ի ընթացքում բազմաբնակավայր համայնքի տարբեր տարածքներում հնարավոր են տնտեսական և սոցիալական ոլորտային փոփոխություններ: Փոփոխությունները հիմք կհանդիսանան թափոնների որակական և քանակական աղբի գոյացման: Առավել մանրամասն ինֆորմացիան ներկայացված է աղյուսակ 6-ում:

Կանխատեսելի փոփոխություններ	2024	2025	2026	2027	2028	Նշումներ
Փաստացի բնակչության ակնկալվող թիվ	41508	41520	41535	41550	41560	
Տնտեսական ակնկալվող փոփոխություններ	Կաճի 10 %-ով	Կաճի 20 %-ով	Կմնա նույնը	Կաճի 20 %-ով	Կաճի 10 %-ով	
Սպառողական ապրանքների տեսակների և պահանջարկի ակնկալվող փոփոխություններ	Կմնա նույնը	Կմնա նույնը	Կմնա նույնը	Կմնա նույնը	Կմնա նույնը	
Թափոնների գոյացման աղբյուրների ակնկալվող փոփոխություններ	Կմնա նույնը	Կկենտրոնացվի՝ քանական նվազում ապահովելով	Կմնա նույնը	Կմնա նույնը	Կմնա նույնը	
Թափոնների վերամշակման/օգտահանման ակնկալվող կայանքներ	25%	55%	25%	50%	50%	

Թափոնների հեռացման վայրերի փոփոխություններ՝ սանիտարական աղբավայրեր, փոխաբեռնման կայաններ	15կմ	75կմ	75կմ	75կմ	75կմ	
Քաղաքականության փոփոխություններից ակնկալվող ազդեցություններ /կանխարգելման, կրճատման, տեսակավորման և վերաօգտագործման մասով/	50%	50%	50%	50%	50%	

Աղյուսակ 6

6.3 Պատասխանատվության փաստացի բաշխում

Ռազմավարական պլանում ներկայացված ծրագրերն սահմանված ժամանակին և արդյունավետ իրականացնելու նպատակով կատարվել է այս կամ այն կերպ ներգրավված անձանց՝ շահակիրների, պատասխանատուների, իրականացնողների միջև դերաբաշխում: Ռազմավարական պլանով նախատեսված տարբեր գործողություններ և թափոնների գործածության փուլեր ենթադրում են տարբեր պատասխանատուներ և շահակիրներ: Հաշվի առնելով, որ աղբահանության և սանիտարական մաքրման ռազմավարությունը պլանավորված է իրականացնելու համայնքը առաջատար դարձնելու նպատակով այս ոլորտում, ուստի ներգրավված կազմակերպությունների պատասխանատվության վերաբերյալ հստակ դերաբաշխումն ըստ գործառույթների տոկոսներով ներկայացված է ստորև աղյուսակ 7-ում՝

Աղյուսակ 7

Պատասխանատուներ	Իրազեկության բարձրացում (%)	Խառը հավաքում (%)	Տեսակավորված հավաքում (%)	Տեղափոխում (%)	Տեսակավորում /գործարանային/ (%)	Վերաօգտագործում /կրկնաօգտագործում (%)	Վերամշակում և/կամ օգտահանում (%)	Վտանգավոր թափոնների վնասազերծում/ վերացում (%)	Տեղադրում աղբավայրում (%)
ՏԻՄ	80	100	25	25	-	10			40
Մանսավոր հատված									
Արտադրող									
Բնակչություն	80	100	25	25	-	10		10	30
Քաղաքացիական կազմակերպություն									

6.4 Անձնակազմի կարողությունների գնահատում և իրազեկվածության աստիճան

Նաիրի համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանի նպատակներին հասնելու, գործողությունները ճիշտ պլանավորելու, առաջարկվող ծրագրերն արդյունավետ իրականացնելու և առկա ոլորտում խնդիրներն վերացնելու նպատակով անհրաժեշտ է ունենալ համապատասխան որակավորում կամ վերապատրաստում անցած մասնագետների ներուժ:

Անձնակազմի հմտություններն ու կարողությունները ճիշտ գնահատելու, թափոնների կայուն կառավարում ապահովելու նպատակով, ըստ առաջարկված մեթոդաբանության հարցաթերթերի, իրականացվել է հարցում աղբահանություն և սանմաքրում իրականացնող աշխատակիցների և

պատասխանատուների, ոլորտով զբաղվող այլ մասնագետների հետ, որի արդյունքում համապատասխան արդյունքները ներկայացված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8

Հմտություն/ ոլորտ	Համապատասխան գիտելիքներ ու հմտություն ունեցող աշխատակիցների թիվը	Գիտելիքների ու հմտությունների ներկայիս մակարդակ (1-շատ ցածր, 2-ցածր, 3-միջին, 4-բարձր, 5-գերազանց)	Նշումներ
Թափոնների կառավարման գիտելիքներ	4	3	
ՀՀ օրենսդրության իմացություն	3	4	
Տվյալների հավաքագրում	6	4	
Համակարգչային քարտեզագրում	3	4	
Գնումների կազմակերպում	8	5	
Պայմանագրերի կառավարում	4	4	
Գործառնական հմտություններ	5	4	
Ֆինանսական վերլուծության իմացություն	4	4	

Պատասխանատուների իրազեկվածությունը և ոլորտային հարցերի շուրջ մասնագիտական պատրաստակամությունը կարևոր է ռազմավարական պլանի խնդիրները արդյունավետ լուծելու նպատակով, որի արդյունքով կպայմանավորվի աղբահանության և սանիտարական մաքրման որակական ավելի բարձր ցուցանիշներ համայնքում: Իրազեկվածության բարձրացման, գիտելիքների ընդլայման նպատակով կմշակվեն ծրագրեր և կիրականացվեն անհրաժեշտ միջոցառումներ ՏԻՄ-ի միջնորդությամբ: Ոլորտին առնչվող մասնագետների իրազեկվածության աստիճանի բարձրացմանն և

մասնագիտական կարողությունների զարգացմանը զուգահեռ, ոչ պակաս կարևոր է նաև բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացման խթանումը, ինչով էլ մեծապես կպայմանավորվի սկզնաղբյուրում թափոնների առաջացումը նվազագույնի հասցնելու, տեսակավորված հավաքելու, վերօգտագործելու հաջողությունները՝ հետևապես նաև ԱՍՌՊ-ի իրականացման հաջողությունը:

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՆՊԱՏԱԿ.Աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարության ընդունման նպատակն է՝ Նաիրի խոշորացված համայնքի տարածքում գոյացող աղբի հավաքման, ինչպես նաև աղբի քանակի նվազեցման, տեղափոխման և անվտանգ հեռացման, օգտահանման ու վերամշակման կայուն մեխանիզմների ներդրումը՝ նպատակաուղղված բնակչության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ:				
Ենթանպատակ 1 Հանրային իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում թափոնների ճիշտ կառավարման նպատակով:	***Ենթանպատակ 2*** Համայնքի հնարավորությունների առավելագույն չափով աջակցություն «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» իրականացման նպատակով:	***Ենթանպատակ 3*** Սանիտարական մաքրման մասնագիտացված նոր մեքենամեխանիզմների ձեռքբերում և շահագործում սանիտարական մաքրումը առավելագույն աստիճանի հասցնելու նպատակով:	***Ենթանպատակ 4*** Համայնքում աղբահանության կառավարման համակարգի և սանիտարական մաքրում իրականացնող ենթակառուցվածքների պրակտիկ գործունեության բարելավում՝ խոշորացված համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան	***Ենթանպատակ 5*** Աղբահանության սխեմաների ներդնում աղբի հավաքման գործընթացը կանոնակարգված իրականցնելու նպատակով:

			սպասարկելու նպատակով:	
ՏԵՍԼԱԿԱՆ. Ունենալ զարգացած, մաքուր և բարեկեցիկ՝ հարմարավետ համայնք, իրականացնելով տեխնիկապես հագեցվածությամբ և նորարական լուծումներով աղբահանություն և սանիտարական մաքրում, ունենալ համայնքային բարելավված ենթակառուցվածքներ՝ խթանելով առավել արդյունավետ միջհամայնքային համագործակցությունն ու բնակիչների ակտիվ մասնակցությունը աղբահանության ոլորտի զարգացման նպատակով:				

Կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր

Հաշվի առնելով ԱՍՌՊ-ի նպատակները, կազմվել են կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր, նախանշելով իրականացման ժամկետները, թիրախներին և ներգրավված գործընկերներին՝ նպատակին հասնելու համար, ինչը ներկայացված է ստորև աղյուսակում:

Ենթանպատակ	Համագործակցող գործընկերներ/Թիրախներ	Ծրագրեր	Կարճաժամկետ	Երկարաժամկետ	Ընթացիկ

Հանրային իրազեկվածության բարձրացում և կարողությունների զարգացում՝ թափոնների ճիշտ կառավարման և բնակչության մշտական և հետևողական մասնակցությունը աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման գործընթացներում ապահովելու նպատակով:	Խոշորացված համայնքի ՆՈՒՀ-եր, այլ կրթական հաստատություններ:	Խոշորացված համայնքի 8 ՆՈՒՀ-երում, 12 կրթական հաստատություններում դասընթացների, կլոր սեղանների կազմակերպում՝ առկա աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրների վերացման նպատակով:	2024-2026		
	Հատկապես երիտասարդներ շրջանում իրազեկության աստիճանի բարձրացում:	Բնակչության շրջանում իրազեկման միջոցառումների իրականացում՝ թափոնների հետ վարվելակերպի նոր եղանակներին ծանոթացման և թափոնների միջոցով արժեքավոր ռեսուրսների ձեռքբերման նպատակով:			2024-2028
	ՏԻՄ, ուսումնական և պետական համայնքային այլ վայրեր, ՆՈՒՀ-եր, Սոցապ, Նպաստառուներ, կառավարություն:	Աղբահանության գրագետ մշակույթի ձևավորման նպատակով կանանց շրջանում՝ հատկապես մայրերի ներգրավմամբ իրազեկում՝ թափոնների տեսակավորման կարևորության և աղբի կրճատման նպատակով, հիմնվելով օրենսդրական դաշտի կարգավորումների վրա:		2024-2027	

	ՏԻՄ, ամբողջ խոշորացված համայնքի հանրություն:	ՏԻՄ-բնակչություն կապի ամրապնդման նպատակով քննարկումների և այլ երկկողմանի կապերի ստեղծում, միջոցառումների պլանավորում՝ հատկապես շաբաթօրյակների սահմանմամբ:	2024-2025		
Համայնքի հնարավորությունների առավելագույն չափով աջակցություն «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրին»:	ՏԻՄ, մասնավոր հատված, ներդրումային ծրագրեր	Խոշորացված համայնքի աղբավայրի ստեղծում հասնելով ամբողջ խոշորացված համայնքի աղբահանության 100 տոկոսի:			2024-2028
	ՏԻՄ, մասնավոր հատված	Համագործակցության խթանման նպատակով հանրային լսումների իրականացում ծրագիրը իրականացնող կազմակերպության մասնակցությամբ, կարիքների գնահատում և անհրաժեշտ ժամանակահատվածում աջակցության ցուցաբերում:	2024-2025		
	ՏԻՄ, մասնավոր հատված	Ուսումնասիրել ներկայիս աղբանոցները, բարեկարգել դրանք, նորացնել աղբամանները՝ փոխարինելով ինը նորով, ստեղծելով պարտադիր հարթակներ:			2024-2026
	ՏԻՄ, մասնավոր հատված:	Շահառուի հետ համաձայնեցված և պլանավորված՝ ձեռք բերել աղբի		2024-2027	

		տեսակավորման համար նախատեսված նոր աղբամաններ:			
Սանիտարական մաքրման մասնագիտացված նոր մեքենամեխանիզմների ձեռքբերում և շահագործում սանիտարական մաքրումը առավելագույն աստիճանի հասցնելու նպատակով:	Մասնավոր հատված, ՏԻՄ,կառավարություն, ներդրումային ծրագրեր:	Սանիտարական մաքրման մասնագիտացված նոր մեքենամեխանիզմների ձեռքբերում և շահագործում սահմանված ժամկետում:	2024-2026		
	ՏԻՄ, Կառավարություն	Սահմանված ժամկետներում ստեղծել մասնակցության հնարավորություն ոլորտային դրամաշնորհային ծրագրերին՝ մեքենամեխանիզմների ձեռքբերման նպատակով:			2024-2028
	ՏԻՄ, Կառավարություն, մասնավոր հատված	Հաշվի առնելով եղանակային պայմանները՝ անհրաժեշտությունից ելնելով ջրցան մեքենաների ձեռքբերում կատարելագործված ծածկույթով փաղոցների և բակերի լվացումը իրականացնելու նպատակով:			2024-2028

	ՏԻՄ, Մասնավոր հատված ՏԻՄ, Մասնավոր հատված	Համայնքում աղբահանության կառավարման համակարգի և սանիտարական մաքրում իրականացնող ենթակառուցվածքների պրակտիկ գործունեության բարելավում՝ խոշորացված համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու և շրջակա միջավայրի ազդեցության կառավարման բարձրացման միջոցով: Համայնքում աղբահանության կառավարման համակարգի և սանիտարական մաքրում իրականացնող ենթակառուցվածքների պրակտիկ գործունեության բարելավում՝ խոշորացված համայնքի ամբողջ տարածքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան սպասարկելու և շրջակա միջավայրի ազդեցության կառավարման բարձրացման միջոցով:			2024-2028 2024-2028
Աղբահանության նոր սխեմաների ներդնում:	ՏԻՄ, մասնավոր հատված, բնակչություն	Աղբահանության և սանմաքրման նոր սխեմաների ներդնում՝ աղբի հավաքման գործընթացը կանոնակարգված իրականցնելու նպատակով:	2024-2026		

	ՏԻՄ, մանսավոր հատված	Աղբի կոնտեյներների հարթակների կառուցում, տեղափոխում կենտրոնական փողոցների վրա:	2024-2025		
	ՏԻՄ, մանսավոր հատված, հանրություն	Բնակիչների կողմից աղբաթափման,աղբի դուրս բերման ժամային գրաֆիկների սահմանում:	2024-2025		
	ՏԻՄ, մանսավոր հատված	Մեքենամեխանիզմների միջոցով աղբի հավաքման նոր գրաֆիկների սահմանում:	2024-2025		

Նաիրի բազմաբնակավայր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման 2024-2028թթ-ի ռազմավարական պլանի իրականացման արդյունքում համայնքում կունենանք համապատասխան հագեցվածությամբ աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ՝ ինչի շնորհիվ հստակ պարբերականությամբ և պատշաճ կերպով գոյացող աղբը կհավաքվի ու կհեռացվի:

Կարճաժամկետ ծրագրեի իրականացմամբ քաղաքացիները և տնտեսվարող սուբյեկտները կտեսակավորեն գոյացող աղբի առնվազն 10%-ը սկզբնաղբյուրում:

Աղբի թափոնների տեսակավորման միջոցով՝ կօգտահանվեն և կվերամշակվեն դրանք, ինչն էլ կնպաստի դեպի աղբավայր հեռացվող աղբի քանակի նվազեցմանը:

Հանրային իրազեկման միջոցառումների իրականացմամբ կներդրվի աղբաթափման մշակույթ:

Կբարեկարգվեն գործող աղբանոցների տարածքները, կհամապատասխանեցվեն սանիտարական նորմերին:

Մարզում նոր աղբավայրի կառուցմամբ և շահագործմամբ հնարավորություն կստեղվի կանաչապատ տարածքների հինման, համայնքի աղբավայրի փակման և լոկալ աղբավայրերի վերացման:

Կնվազեն մարդկանց առողջության ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները:

Մշտադիտարկում և վերլուծություն

ԱՍՌՊ-ի միջոցառումների ծրագրերի իրականացման արդյունավետությունն ապահովվելու է մշտադիտարկման և հաշվետվության ներկայացման արդյունավետ համակարգի ներդրմամբ:
Պլանի իրականացման վերլուծությունների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը անհրաժեշտության դեպքում կներկայացվի աղբահանության ոլորտի լիազոր մարմնին՝ պլանավորված ժամանակաշրջանի 2-րդ և 4-րդ տարիների ավարտին: